

ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-85

Հիմնաբառեր. *ինովացիա, օրենք, հայեցակարգ, ծրագիր, ռազմավարություն*

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ ինովացիոն (նորարարական) համակարգին ուղղակիորեն առնչվող բոլոր իրավական ակտերն ու ինովացիոն գործունեությունը խթանող ընթացիկ ծրագրերը: Ուսումնասիրության արդյունքում կարարվել է եզրակացություն, որ տվյալ օրենքում բացակայում են որոշակիությունն ու չափելիությունը, ուստի առաջարկվել է վերանայել Օրենքը, ինչպես նաև մշակել նոր, արդիական ռազմավարություն, որտեղ կներառվեն ինովացիոն համակարգի տարբեր օղակների միջև փոխգործակցություն ապահովող ծրագրեր: Առաջարկվել է նաև ինովացիոն գործունեությունը խթանող ծրագրեր մշակել զարգացման տարբեր փուլերում գտնվող ընկերությունների և տնտեսության բոլոր ոլորտների համար:


Ազգային ինովացիոն համակարգը (ԱԻՀ) պետական և մասնավոր ինստիտուտների ցանց է, որոնց գործունեության և փոխազդեցության արդյունքում ստեղծվում և տարածվում են նոր ապրանքներ ու տեխնոլոգիաներ: ԱԻՀ-ն, անկախ զարգացման և բարդության աստիճանից, հենվում է պետական, գործարար, կրթական և գիտական հենասյուների վրա: Ինովացիա կատարելու համար անհրաժեշտ են մարդկային ռեսուրսներ, որոնց թողարկումը, ըստ պահանջվող որակների, իրագործում է կրթության ոլորտը, անհրաժեշտ է գիտելիք, որը գեներացվում է գիտության միջոցով, անհրաժեշտ է գործարար, որն այդ գիտելիքը կվերածի ապրանքի և կառուտրայնացնի, և, իհարկե, անհրաժեշտ է բարենպաստ օրենսդրական միջավայր, որտեղ այդ ամենը հնարավոր և արդյունավետ կդառնա: Ին-



Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»
հետազոտական կենտրոն

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

 <https://orcid.org/0000-0003-2226-6435>

վացիոն գործունեությունը խթանելու պետության ուղղակի գործառույթը հենց այս վերջին տիրույթում է՝ ստեղծել այնպիսի օրենսդրական միջավայր, հարկային և ֆինանսական այնպիսի խթաններ, որ նորարարություն կատարելը շահավետ դառնա մասնավորի համար, իսկ արդյունքում դրանից օգտվի հասարակությունը և շահի ողջ տնտեսությունը: Սակայն, այլ հավասար պայմաններում, եթե նույնիսկ պետությունն ապահովի բարենպաստ միջավայր, միայն դա դեռևս բավարար չէ ձեռնարկությունների շրջանում պահանջվող ինովացիոն ակտիվությունը խթանելու համար, քանի որ ինովացիոն համակարգը կարող է գործել բացառապես բոլոր հենասյուների արդյունավետ գործունեության և փոխազդեցության պայմաններում: Իսկ մյուս հենասյուներից առնվազն երկուսում՝ կրթության և գիտության բնագավառներում, դարձյալ կարևորվում են պետության ակտիվ գործառույթները: Սակայն, այս հոդվածի շրջանակում կանդրադառնանք միայն պետության ուղղակի գործառույթին:

«-ում ինովացիոն քաղաքականության հիմքը դրվել է դեռևս 2005 թ.-ին, երբ հաստատվեց 2005-2010 թթ. ինովացիոն զարգացման ծրագիրը, այնուհետև հաջորդ տարի ընդունվեց «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը¹ (այսուհետ՝ Օրենք), և սահմանվեցին ինովացիոն ոլորտի գերակա ուղղությունները: Այս ոլորտում 2005 թ.-ից մինչ 2022 թ. ընդունված բոլոր օրենսդրական կարգավորումները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Օրենքով տրվում են մի շարք հասկացությունների (ինովացիա, ինովացիոն նախագիծ, պետական ինովացիոն քաղաքականություն, վենչուրային հիմնադրամ, ինովացիոն ենթակառուցվածք, գիտաինովացիոն կենտրոն, տեխնոպարկ, բիզնես ինկուբատոր) սահմանումները, առանձնացվում ինովացիոն գործունեության տեսակները և նշվում սուբյեկտների շրջանակը: Օրենքով սահմանվում են նաև պետական աջակցության նպատակը, խնդիրները և

առանձնացվում աջակցության ուղղությունները: Հարկ է նշել, որ դրանք առավելապես վերաբերում են ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ապահովմանը, այլ ոչ թե ֆինանսավորմանը: Մասնավորապես՝ պետական աջակցության հիմնական ուղղությունները ներառում են վենչուրային, ներդրումային հիմնադրամների կազմավորման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծումը, ֆինանսական և ներդրումային աջակցության երաշխիքների, պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրումը, ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև համապատասխան գործունեություն իրականացնող կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը աջակցությունը: Օրենքում թեև նշված են աջակցության ուղղությունները, սակայն հստակեցված չեն պետական աջակցության ձևերը, չկան սահմանված թիրախներ, և առհասարակ բացակայում են որոշակիությունն ու չափելիությունը (օրինակ՝ չի հստակեցվում թե որն է համարվում կատարելագործված ապրանք կամ կատարելագործված տեխնոլոգիա): Այստեղ չկա նաև որևէ դրույթ կրթության, գիտության, հետազոտական աշխատանքների և արտադրության միջև կապի ստեղծմանն ու զարգացման վերաբերյալ: Ուստի անհրաժեշտ է Օրենքը վերանայել, կատարել լրացումներ և հստակեցումներ:

Օրենքի ընդունմանը հաջորդել է ՀՀ կառավարության որոշումը², որով սահմանվել են ինովացիոն ոլորտի զարգացման 4 ընդհանուր գերակայությունները՝

- ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,
 - էներգիայի այլընտրանքային աղբյուրները,
 - բարձր տեխնոլոգիական մշակումները,
 - էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը:
- Այս գերակայություններից ամենատե-

¹ «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?Docid=24697>

² «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19 հոկտեմբերի, 2006 թ. N1466-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28107>

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ինովացիոն գործունեությանն ուղղակիորեն առնչվող օրենսդրական կարգավորումները

Օրենքներ, կառավարության որոշումներ, ծրագրեր	Քաղաքականությունը մշակող մարմին	Քաղաքականությունն իրականացնող մարմին
«ՀՀ-ում ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թթ. ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2005 թ. սեպտեմբերի 28-ի N1729-Ն որոշումը	ՀՀ կառավարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 2006 թ.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Ինովացիոն բնագավառում լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. սեպտեմբերի 7-ի N1252-Ա որոշումը	ՀՀ կառավարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N1466-Ն որոշումը	ՀՀ կառավարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թ. օգոստոսի 2-ի N877-Ն որոշումը	ՀՀ կառավարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թ. օգոստոսի 2-ի N878-Ն որոշումը	ՀՀ կառավարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի արձանագրային որոշումը, «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ»	ՀՀ կառավարություն	«Ձեռնարկությունների ինկոբատոր հիմնադրամ» ՊՈԱԿ, «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»
«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 2014 թ.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
«Ինովացիոն նախագծերի մրցույթի հայտի ձևը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2.03.2016 թ. N166-Ն հրամանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Տնտեսության արդիականացման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի N355-Լ որոշումը	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «Ձեռնարկությունների ինկոբատոր հիմնադրամ» ՊՈԱԿ
ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի «2.3. Բարձր տեխնոլոգիաներ» մասի դրույթները	ՀՀ կառավարություն	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

սանելի խթանը դեռևս 2014 թ.-ին ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն է (SS-ն գերակա ոլորտ էր հայտարարվել դեռևս 2000 թվականին), որով SS ոլորտի սկսնակ ընկերություններին, որոնց աշխատակիցների թի-

վը չի գերազանցում 30-ը, հավաստագիր ստանալու պահից սկզբնական շրջանում 5 տարի ժամկետով, իսկ 2019 թ. հունվարի 1-ից հետո հավաստագիր ստացածներին՝ մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը³ տրվում է հարկային արտոնություն՝ շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույթա-

³ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329>

չափերի կիրառման տեսքով: Հատկապես այս օրենքի ընդունումից հետո, նոր ստեղծվող ընկերությունների թվի առումով, ոլորտում էական աշխուժացում նկատվեց: Այսպես՝ եթե 2014 թ. նոր ստեղծվող ընկերությունների թվի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 4% (բացարձակ թվով 16 նոր ձեռնարկություններ), ապա 2015 թ.՝ ավելի քան 13% (բացարձակ թվով 56 նոր ձեռնարկություններ)⁴: Բարենպաստ օրենսդրական միջավայրի և արտաքին աշխարհից եկող դրական ազդակների շնորհիվ (մեծ թվով ՏՏ մասնագետների ՀՀ տեղափոխվելը)⁵ ՏՏ ոլորտի ծավալը ևս արագ տեմպերով աճում է: Այսպես՝ 2023 թ. հունվար-մարտին ՏՏ ոլորտի հասույթը կազմել է 101.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 87%-ով⁶: Այնուամենայնիվ, նշված հարկային արտոնության ժամկետն ավարտվում է 2023 թ. դեկտեմբերի 31-ին (եթե դարձյալ որոշում չկայացվի դրա երկարաձգման մասին), իսկ ռուս ռելյականտների ՀՀ-ում մնալը էականորեն կախված է ռուս-ուկրաինական հակամարտության հետագա զարգացումներից, հետևաբար՝ նրանց հեռանալու հավանական սցենարի դեպքում հնարավոր է՝ ոլորտում դիտվի աշխուժացման թուլացում:

Ինչ վերաբերում է ինովացիաների խթանման հաջորդ իրավական ակտե-

րին՝ ինովացիոն գործունեության աջակցության տարեկան ծրագրի կատարմանը (2006 թ. N878-Ն որոշում), ինովացիոն նախագծերի ֆինանսավորմանը և մրցույթների անցկացմանը (2006 թ. N877-Ն որոշում), ապա պետք է նշել, որ դրանք թեև փաստացի ուժը կորցրած չեն համարվում, սակայն չեն էլ իրականացվում: Մասնավորապես՝ ինովացիոն գործունեության աջակցության տարեկան ծրագրով նախատեսվում է պետական բյուջեի նախագծում ինովացիոն նախագծերի ֆինանսավորման և համաֆինանսավորման համար հատկացումներ նախատեսել՝ մրցութային կարգով ընտրված և ինովացիոն բնագավառում ՀՀ կառավարության լիազոր պետական մարմնի կողմից հաստատված ինովացիոն նախագծերի հայտերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա: Մեկ այլ որոշմամբ (2006 թ. N1252-Ա որոշում) ինովացիոն բնագավառում լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը (ներկայիս Էկոնոմիկայի նախարարություն), սակայն վերջինիս բյուջեի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդպիսի մրցութային ծրագրեր տարիներ ի վեր չեն իրականացվել, և դրա համար միջոցներ չեն նախատեսվել և չեն նախատեսվում 2024-2026 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով: Էկոնոմիկայի նախարարության «Գիտելիքահենք, նորարարական տնտե-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության «Գիտելիքահենք, նորարարական տնտեսության և ՓՄՁ աջակցություն» ծրագրի միջոցառումները, դրանց փաստացի և նախատեսվող հատկացումները (հազ. դրամ)⁶

Միջոցառման անվանում	2022	2023	2024	2025	2026
ՓՄՁ սուբյեկտների աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում	160,092.5	160,092.5	4,487,000.0	4,914,184.4	5,716,684.4
Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակով տնտեսավարողներին աջակցություն	0.0	1,573,200.0	2,223,360.0	2,448,000.0	2,640,000.0
Արտադրական կարողությունների արդիականացման միջոցառում	4,311,791.2	8,233,900.0	16,343,348.7	20,775,749.4	21,137,648.9

⁴ Թադևոսյան Ռ., Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը. ձեռքբերումներ և խնդիրներ, 2019 թ., <https://asue.am/amberd/publication/analytics/it-sector-achievements-and-problems>
⁵ ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/file/article/sv_03_23a_6200.pdf
⁶ Կազմվել է 2024-2026 թթ. ՄԺԾԾ և 2026 թ. բյուջետային ֆինանսավորման հայտի հավելված 1-ի հիման վրա, <https://mineconomy.am/page/66>



սությանը և փոքր ու միջին ձեռներեցությանն աջակցություն» ծրագրով նախատեսվել է 3 միջոցառում (աղյուսակ 2), որից ոչ մեկը նման մրցույթ չի ենթադրում:

Առաջին ծրագրի շրջանակում նախատեսվում է որոշակի խմբերի (ձեռներեցությանը զբաղվելու ցանկություն ունեցող գործազուրկներ, տեղահանվածներ, միգրանտներ, կին ձեռներեցներ, մարզաբնակ երիտասարդ ձեռներեցներ, նախորդ 2 տարում 30% շրջանառության աճ գրանցած ձեռներեցներ, 65 տարեկանից բարձր ձեռնարկատերեր)⁷ մինչև 2024 թ. ավարտը վարկային երաշխավորությունների տրամադրում: Սա չի կարելի համարել ինովացիաների ուղղակի աջակցման ծրագիր, սակայն ֆինանսական հասանելիություն չունեցող ՓՄՁ-ների և սկսնակ գործարարների համար ֆինանսական հասանելիության ճանապարհին խոչընդոտների հարթումը կարող է նպաստել նրանց «կենսունակությանը», որն էլ, իր հերթին, հետագայում կմեծացնի ինովացիա կատարելու հավանականությունը: Երկրորդ և երրորդ միջոցառումները կարելի է համարել ինովացիոն գործունեությունը խթանող ծրագրեր, քանի որ նոր արտադրական կարողությունների արդիականացման միջոցառման շրջանակում նախատեսվող մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերման նպատակային վարկերի և լիզինգի տոկոսադրույքի 8-10% սուբսիդավորումն⁸ ուղղակիորեն նպաստելու է նոր սարքավորումների ձեռքբերման աճին, իսկ, ըստ «Ինովացիոն տվյալների հավաքման և մեկնաբանման ձեռնարկի» Օսլոյի 3-րդ հրատարակության, արտադրության գործընթացում սարքավորումների փոփոխությունը համարվում է գործընթացային ինովացիա: Վերջինս կարող է ներառել նաև տեխնիկայի և ծրագրաշարերի կատարելագործումը, գործիքների բարելավումը, մատակարարման շղթայի և առաքման համակարգի ծրագրային լուծումները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և հաճախորդների սպասարկման մեթոդների փոփոխությունը⁹: Եվ եթե հաշվի առնենք, որ մեթոդները մշակում և կատարելագործում են

մարդիկ, ապա բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառումը ևս կարելի է համարել ինովացիայի խթանման ծրագիր: Միջոցառումը նախատեսում է փոխհատուցել բարձր որակավորում ունեցող մասնագետներին (ծրագրին դիմելու պահին նախորդող 30 ամսից 12-ն ապրել է ՀՀ-ից դուրս և ավարտել առաջատար 400 համալսարաններից մեկն ըստ QS վարկանշի և/կամ ունի առնվազն 10 տարվա փորձ նշված վարկանշային կամ ինդեքս թողարկող ընկերությունների կողմից վարկանշավորված/ինդեքսավորված ընկերություններում) վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների 20%-ը (դոկտորական աստիճան ունեցողների դեպքում՝ 50%), սակայն ոչ ավելի, քան ամսական 1 միլիոն դրամ (դոկտորական աստիճան ունեցողների դեպքում՝ 1,5 միլիոն դրամ) և ոչ ավելի, քան փոխհատուցման ժամանակաշրջանի եկամտային հարկը: Ընդ որում, դոկտորական աստիճան ունեցող նշված մասնագետի՝ ՀՀ բուհերում դասավանդումը փոխհատուցվելու է 70%-ի չափով, սակայն ոչ ավելի, քան գումարային ամսական 2 միլիոն դրամը⁹: Փոխհատուցումը տրամադրվելու է դիմումի հաստատումից սկսած իրար հաջորդող 36 ամիսների համար (միջոցառման ավարտը 2025 թ. դեկտեմբերի 31):

Այսպիսով, որպես ինովացիոն բնագավառում լիազոր մարմին, Էկոնոմիկայի նախարարությունը թեև իրականացում է համապատասխան գործունեության խթանման որոշակի միջոցառումներ, սակայն, ըստ N877-Ն և N878-Ն որոշումների, ինովացիոն նախագծերի մրցույթներ չի անցկացնում: Ընդ որում, վերոնշյալ ծրագրերն իրականացվել են «Տնտեսության արդիականացման միջոցառումները հաստատելու մասին» կառավարության N 355-Լ որոշման հիման վրա: Պետք է նշել, սակայն, որ որոշակի մրցույթներ՝ ոչ այդ որոշումներից բխող, անցկացնում է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության (FSU) նախարարությունը (աղյուսակ 3): Մասնավորապես՝ հաշվի առնելով ձեռներեցների դերը տնտեսության մեջ ինովացիա կա-

⁷ ՀՀ կառավարության 26-րդ մարտի, 2020 թ. N355-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178523>

⁸ Guidelines for Collecting and Interpreting Innovation data, Oslo Manual, OECD 2005, 3rd edition, pp 45-61

⁹ ՀՀ կառավարության 4-րդ օգոստոսի, 2022 թ. N1224-Լ որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167047>

տարելու հարցում, ԲՏԱ նախարարությունը 2023 թ. նախատեսում է 500 մլն դրամ հատկացնել «Ձեռններեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառմանը, որի նպատակը մրցութային կարգով դրամաշնորհների տրամադրմամբ ֆինանսավորման և աճի հնարավորություն ապահովելն է սկսնակ տեխնոլոգիական ընկերությունների համար, ինչպես նաև նոր գիտելիքի ներհոսքի հնարավորությունների ստեղծումը: Միջոցառումն ունի մի քանի բաղադրիչ. «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի շրջանակում նախատեսվում է ֆինանսավորում տրամադրել գաղափարի փուլում գտնվող սկսնակ ընկերություններին, որոնց կողմից ներկայացվող արտադրանքի և (կամ) ծառայության գաղափարը միտված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը և (կամ) տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների և մարտահրավերների լուծմանը¹⁰: Միջոցառման այս բաղադրիչի բյուջեն 150 միլիոն դրամ է, որը նախատեսվում է բաշխել մրցույթը հաղթահարած ընկերությունների միջև (տարեկան 30 ընկերություն, յուրաքանչյուրին՝ մինչև 5 միլիոն դրամ): Միջոցառումն ունի նաև ինկուբացիոն և աքսելերացիոն փուլեր, որոնք օգնում են հաղթող ճանաչված մասնակիցներին աշխատել իրենց գաղափարի վրա, մշակել նվազագույն կենսունակ արտադրանք և անցում կատարել ընկերության զարգացման հաջորդ փուլ: Միջոցառման մեկ այլ բաղադրիչ է «Մուտք դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթը, որով նախատեսվում է ֆինանսավորում տրամադրել շուկա մուտք գործելու փուլում գտնվող ընկերություններին, որոնց կողմից ներկայացվող արտադրանքի և (կամ) ծառայության նախատիպը միտված է բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր արժեքի ստեղծմանը և տեխնոլոգիաների կիրառմամբ արդի խնդիրների ու մարտահրավերների լուծ-

մանը¹¹: Այս ծրագրի բյուջեն 200 մլն դրամ է, որը նախատեսում է մրցութային կարգով հաղթող ճանաչված տարեկան 20 ընկերության տրամադրել մինչև 10 մլն դրամ:

Տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ հիմնելու և զարգացնելու մեկ այլ ծրագիր է «Ներուժը», որով նախատեսվում է աշխարհի տարբեր երկրներից հայազգի ձեռներեցներից և առաջատար մասնագետներից բաղկացած թիմեր ներգրավել՝ նրանց տրամադրելով ֆինանսական և այլ բնույթի աջակցություն: Ծրագրի արդյունքում ակնկալվում է մի կողմից շահառուների համար ապահովել ձեռներեցությամբ զբաղվելու պայմաններ, մյուս կողմից՝ զարգացնել ձեռնարկատիրական էկոհամակարգը: ԲՏԱ նախարարության վերոնշյալ բոլոր նախագծերը բխում են ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից, որով նախատեսվում է նպաստել ինովացիոն համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում դրա համակողմանի ներդրմանը¹²:

Բացի վերը նշված ծրագրերից, ՀՀ հարկային օրենսգրքով (հոդված 64)¹³ ԱԱՀ-ից ազատվում է կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան գիտահետազոտական աշխատանքների կատարումը, ինչպես նաև շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են անմիջականորեն շահութահարկ վճարողի կողմից կամ նրա պատվերով իրականացվող գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների ծախսերը (հոդված 121): Իսկ գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, տոհմային և սորտափորձարկման կազմակերպությունները, կայանները և հենակետերը ազատվում անշարժ գույ-

¹⁰ ՀՀ ԲՏԱ նախարարություն, <https://hightech.gov.am/2023/05/05/%d5%a3%d5%a1%d5%b2%d5%a1%d6%83%d5%a1%d6%80%d5%ab-%d6%83%d5%b8%d6%82%d5%ac-%d5%a2%d5%a1%d5%b2%d5%a1%d5%a4%d6%80%d5%ab%d5%b9%d5%b8%d5%be-%d5%a4%d6%80%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b7%d5%b6%d5%b8/>

¹¹ ՀՀ ԲՏԱ նախարարություն, <https://hightech.gov.am/2023/05/05/%d5%b4%d5%b8%d6%82%d5%bf%d6%84-%d5%a4%d5%a5%d5%ba%d5%ab-%d5%b7%d5%b8%d6%82%d5%af%d5%a1-%d5%a2%d5%a1%d5%b2%d5%a1%d5%a4%d6%80%d5%ab%d5%b9%d5%b8%d5%be-%d5%a4%d6%80%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b7/>

¹² ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի N1363-Ս որոշում, ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328>

¹³ ՀՀ հարկային օրենսգրքը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=177027>

ԱՂՅՈՒՍԱԿ 3

PSU նախարարության «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի միջոցառումներ¹⁴

Միջոցառումներ	2022	2023	2024	2025	2026
Ինկուբացիոն ծրագրերի թիվը շահառուների թիվը		1 30	1	1	1
Աքսելերացիոն ծրագրերի թիվը շահառու թիմերի թիվը շահառուների թիվը	1 18 36	2 35 70	1	1	1
«Գաղափարի փուլում գրավող պրոդուկտների համար» դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում ստացող կազմ. թիվը		30	30	30	30
«Շուկա մուտք գործելու փուլում գրավող պրոդուկտների համար» տեսքով ֆինանսավորում ստացող կազմ. թիվը		20	20	20	20
Դրամաշնորհների տեսքով ֆինանսավորում ստացող կազմակերպությունների թիվը	33				
Տաղանդի ձևավորմանն ուղղված միջոցառումների քանակը	1	1			
Քարձր տեխնոլոգիական ոլորտում արտասահմանում անցկացվելիք վերապարտասարման շահառուների թիվը	4				
Գործալ տաղանդի ներգրավմանն ուղղված միջոցառումների քանակը, հատկապես		1			
Տեխնոլոգիական ձեռներեցության դասընթացի մշակումը			1	1	1
Տեխնոլոգիական ձեռներեցության դասընթացի իրականացումը, ծրագրերի քանակը, բուհերի քանակը, հատկապես			5	5	5
«Գաղափարից դեպի բիզնես» հաղորդաշարի իրականացումը, քանակ			2	2	2
Կապիտալի ֆինանսավորմանն ուղղված միջոցառումների քանակը			1	1	1
Ինկուբացիոն ծրագրի հաղթող կազմակերպությունների քանակը			1	1	1
Աքսելերացիոն ծրագրի հաղթող կազմակերպությունների քանակը			1	1	1
«Ներուժ» ծրագրի հաղթող կազմակերպությունների քանակը			10	10	10
«Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագրի հաղթող կազմի քանակը			10	10	10
Քլաստերային միջոցառումների քանակը			2	2	2
Թեմատիկ հաքսթոններ միջոցառումների քանակը			5	5	5
«Սպարտակի շաքաթ» միջոցառումների քանակը			1	1	1
Համաֆինանսավորվող միջոցառումների քանակը			5	5	5
Ընդհանուր բյուջե, հազ. դրամ	402,129.6	500,000.0	1,198,700.0	1,298,700.0	1,398,700.0

¹⁴ Կազմվել է 2024-2026 թթ. ՄԺԾԾ և 2024 թ. բյուջետային ֆինանսավորման հայտի հիման վրա (PSU նախարարություն), <https://hightech.gov.am/%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b-f%d5%a5%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6-%d5%b6/%d5%a2%d5%b5%d5%b8%d6%82%d5%bb%d5%a5/>

քի հարկի 50%-ից (հոդված 130): Սակայն, մասնավոր հատվածի կողմից կատարվող ՀուՄ աշխատանքների վերաբերյալ ՀՀ-ում վիճակագրություն չի վարվում, ուստի հայտնի չէ, թե տարեկան քանի ընկերություն է օգտվում նշված արտոնություններից և նրանց քանի տոկոսն է իրազեկված այս առումով:

Ամփոփելով ԲՏԱ նախարարության խթանող միջոցառումների լուսաբանումը, նախ՝ նշենք, որ ստարտափների զարգացման նախնական փուլի համար գործում են դրամաշնորհներ, սակայն դեռևս բացակայում են հետագա փուլերին անհրաժեշտ ավելի մեծ ֆինանսավորման ծրագրերը: Երկրորդ, այս բոլոր ծրագրերում շեշտադրվում է տեխնոլոգիական տեսանկյունը, մինչդեռ ինովացիան սուկ տեխնոլոգիա չէ:

Դեռևս 2011 թ. ընդունվել է «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարությունը», որով նախատեսվել է իրականացվել են մի շարք համակարգաստեղծ նախագծեր, տրվել է ինովացիոն տնտեսության և ազգային ինովացիոն համակարգի ձևավորման մեկնարկը, և ամենևին էլ միայն տեխնոլոգիական ոլորտը չի

շեշտադրվել: Պոստֆակտում կարող ենք նշել, որ ռազմավարությամբ նախատեսված ծրագրերն ընդհանուր առմամբ իրագործվել են, սակայն այդպես էլ չի հաջողվել հասնել տեսլականով սահմանված նպատակին, այն է՝ Հայաստանը դարձնել գլոբալ տեխնոլոգիական ՀուՄ կենտրոն: Բացի այդ, նշված ռազմավարությունը կորցրել է իր արդիականությունը, ուստի անհրաժեշտ է մշակել նորը, որը կհամապատասխանի Հայաստանի ներկայիս ինովացիոն համակարգին և հաշվի կառնի այս տարիների ընթացքում արտաքին աշխարհի միտումների փոփոխությունը:

Այսպիսով, ըստ կատարված վերլուծության, առաջարկում ենք վերանայել Օրենքը՝ բարձրացնելով դրա որոշակիության ու չափելիության մակարդակը, մշակել նոր հայեցակարգ՝ ներառելով ինովացիոն համակարգի տարբեր օղակների միջև փոխգործակցություն ապահովող ծրագրեր, ինչպես նաև իրականացնել ինովացիոն գործունեությունը խթանող նախագծեր՝ զարգացման տարբեր փուլերում գտնվող ընկերությունների և տնտեսության բոլոր ոլորտների համար:

¹³ Կազմվել է 2024-2026 թթ. ՄԺԾ և 2024 թ. բյուջետային ֆինանսավորման հայտի հիման վրա (ԲՏԱ նախարարություն), <https://hightech.gov.am/%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b-f%d5%a5%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6-%82%d5%b6/d5%a2%d5%b5%d5%b8%d6%82%d5%bb%d5%a5/>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԲՏԱ նախարարություն, <https://hightech.gov.am>
2. «Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19 հոկտեմբերի, 2006 թ. N1466-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28107>
3. ՀՀ կառավարության 26-ը մարտի, 2020 թ. N355-L որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=178523>
4. ՀՀ կառավարության 4-ը օգոստոսի, 2022 թ. N1224-L որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167047>
5. ՀՀ կառավարության 18-ը օգոստոսի, 2021 թ. N1363-Ա որոշում, ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328>
6. ՀՀ հարկային օրենսգիրք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=177027>
7. ՀՀ ՎԿ, https://www.armstat.am/file/article/sv_03_23a_6200.pdf
8. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130329>
9. «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?Docid=24697>
10. 2024-2026 թթ. ՄԺԾ և 2026 թ. բյուջետա-

յին ֆինանսավորման հայտ, հավելված 1, <https://mineconomy.am/page/66>

11. Թադևոսյան Ռ., Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը. ձեռքբերումներ և խնդիրներ, 2019 թ.,

<https://asue.am/amberd/publication/analytics/it-sector-achievements-and-problems>

12. Guidelines for Collecting and Interpreting Innovation data, Oslo Manual, OECD 2005, 3rd edition, pp 45-61.

Рузанна ТАДЕВОСЯН

Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ИНСТИТУЦИОНАЛЬНАЯ ОСНОВА ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ РА

В статье изучены все правовые акты, непосредственно связанные с инновационной системой РА и действующие программы стимулирования инновационной деятельности. В результате исследования мы пришли к выводу, что закону не хватает конкретности и измеримости, поэтому предлагаем его доработать, а также разработать новую, современную стратегию, в которую будут включены программы, обеспечивающие взаимодействие между различными звеньями инновационной системы. Также необходимо разработать программы, стимулирующие инновационную активность для компаний, находящихся на разных стадиях развития, и для всех отраслей экономики.

Ключевые слова: *инновация, право, концепция, проект, стратегия*

Ruzanna TADEVOSYAN

Junior researcher at «Amberd» Research Center, ASUE

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

INSTITUTIONAL FRAMEWORK OF THE RA INNOVATION SYSTEM

The present paper examines all the legal acts directly related to the RA innovation system and the current programs promoting innovation activity. As a result of the study, we concluded that the Law lacks specificity and measurability, so we suggest revising it, as well as developing a new, modern strategy, in which programs ensuring interaction between different links of the innovation system will be included. It is also necessary to develop programs that promote innovation activity for companies at different stages of development encompassing all sectors of the economy.

Keywords: *innovation, law, concept, project, strategy*